

ՄԵՐ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ*

Հայրենի բնաշխարհում հայ գրչության ե մշակույթի հնագույն օրրաններից մեկն էր Տարսնը, իր բազմաթիվ հուշակավոր վանքերով ու եկեղեցիներով: Հ. Համադասպ Ոսկյանը Տարոն-Տուրուբերանի վանքերի պատմությանը նվիրած իր աշխատության մեջ, արդեն իսկ ցույց է տվել գրչության ասպարեզում նշանավոր հանդիսացող բազմաթիվ վանքերի խաղացած դերը միջնադարյան Հայաստանի պատմության մեջ:

Հայ գրչության կարևոր կենտրոններից էր Բաղեշի Ամիրդուլու (Ամիրդուլ) վանքը: Նրա ոգին փչեց դարում գործող Վարդան Բաղիշեցին էր: Շատ մեծ են նրա ծառայությունները ձեռագրերի ընդօրինակման և փրկության պատմության մեջ: Դարձյալ նա է, որ կարգավորում է վանքի գրադարանը, այդ նպատակով հատուկ հրավիրելով նշանավոր կազմարար և ծաղկող Սահակ Վանեցուն նորոգել է տալիս բազմաթիվ գրքեր: Բաղիշեցին անցնում է Մուշի Ա. Առաքելոց վանքը, կարգավորում է նրա մատենադարանը և Սահակ Վանեցու ձեռքով փրկում վատթար վիճակում գտնվող 45 ձեռագրեր, իսկ Ամիրդուլու մատենադարանում՝ 74: Ձննելով և կարգավորելով բազմաթիվ գրադարաններ, Բաղիշեցին ամեն մի նոր ձեռագրի հանդիպելիս, այն ընդօրինակել է տվել և հարստացրել Ամիրդուլու դարանը:

Հ. Ն. Ակինյանի խոսքերով ասած, Վարդան Բաղիշեցու նպատակն էր Ամիրդուլու վանքը դարձնել գրականության և մտավոր լուսավորության կենտրոն¹⁰²: Նա ապրում էր իր

աշխատանքով և ձեռագրերի փրկությունը, ինչպես և նրանց մեջ եղած լույսի տարածումը ամենամեծ գործերից բարձր էր համարում. այդ մասին նա գրել է. «... (30), և (40) գրոցս նորոգելն և ի հինութենէ յառաջածելն և ի փթածութենէ ի կենդանութիւն ածելն մեծ է քան զեկեղեցիս շինելն...»¹⁰³:

Նա Ամիրդուլու գրադարանում ստեղծեց նաև հայ պատմագիրների կարևոր մի բաժին: Այդ ձեռագրերից մի քանիսը հասել են Մաշտոցի սնվան մատենադարան և հույժ կարևոր նշանակություն ունեն մեր մի քանի պատմիչների ժառանգությունը ուսումնասիրելու տեսակետից:

Մեզ հասել է Վարդան Բաղիշեցու իսկ ձեռքով կազմված Ամիրդուլու մատենադարանի ձեռագիր և տպագիր գրքերի ցանկը հետևյալ խորագրով. «Այս են վաղրապետական գրքանք ի վանքն Ամիրդուլու համարով անջինջ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետին»¹⁰⁴: Այս ցուցակից էլ երևում է, որ Վարդան Բաղիշեցին, նշանավոր ուսուցչապետ, դաստիարակ և մատենագիր լինելուց առաջ, եղել էր մատենագետ և գրադարանային գործիչ ամենախիսկական իմաստով¹⁰⁵:

Ամիրդուլի և Բաղեշի մյուս բոլոր վանքերը երբեմն-երբեմն, բայց մանավանդ 1895—1896 թվականներին և առաջին համաշխարհային պատերազմի շրջանին կողոպուտի և ավերման ենթարկվեցին¹⁰⁶:

¹⁰³ Վ. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ», XIII—XVIII դդ., հատոր II, Երևան, 1956, էջ 386:

¹⁰⁴ «Արարատ», 1903, էջ 178—189:

¹⁰⁵ Ռ. Իսխանյան, «Հայ մատենագիտության պատմություն», պրակ Ա, Երևան, 1964, էջ 128:

¹⁰⁶ Հ. Հ. Ոսկյան, «Վասպուրական-Վանի վանքերը», Գ, էջ 913:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Բ—Գ—Դ և Ե—Զ—է համարներից:

¹⁰² Հ. Ներսեսյան, «Բաղեշի գրչությունը 1500—1704, նպաստ մը Հայոց Եկեղեցվո պատմության և մատենագրության», Վիեննա, 1952, էջ 275:

Մշո Ս. Կարապետի վանքը ոչ միայն եղել է հայ ժողովրդի ամենահռչակավոր ուխտատեղիներից մեկը, այլև ունեցել է շատ հարուստ մատենադարան: Անգամ դեռ ԺԹ դարի սկզբին, Մշո Ս. Կարապետի վանքը նշանավոր էր իր «ձեռագիրներու ստվար և ահագին մթերքով»: Ահա թե ինչ է գրում Ս. Կարապետի մասին, Մուշի անցյալի կարկառուն ուսումնասիրողներից մեկը՝ Գեղամ Տեղ-Կարապետյանը. «1828 թվականին առաջ Ս. Կարապետի տաճարին կից եղած Ս. Գևորգոս հոյակապ և ընդարձակ վկայականը վերեն վար մատենադարան մը եղած է անհամար ձեռագիրներու՝ ձեռագիրներ վաղեմի ու բազմաթիվ, ամենքն ալ՝ թեթև բացառությամբ գրված նույն վանքին, նվիրված նույն մենաստանին» — ընդ հովանյալ Սրբո Կարապետին, տքնող հոգնատանջ գրիչներով, բացի պարզ ձեռագիրներն՝ երևակայվածն շատ ու շատ ավելի գտնվեցին նաև — ալամբ ընդելուզվալ, ոսկեպատ, արծաթապատ և խաչազարդ նվիրական մագաղաթներ, անգլուտ անգին դիրքեր, որոնց հնագիտական արժեքը և մեծ կարևորությունը ամեն տարակույսն վեր են»¹⁰⁷:

Ուսումնասիրողը գրում է նաև Ս. Կարապետի վանքի ձեռագրական երբեմնի հսկա ժառանգության մասին. «Երևակայեցեք 40-ն ավելի մարդահասակ սնդուկներ՝ մեկուկես մետր երկար, այնչափ ալ բարձր ու լայն մինչև բերանը լեցված այլևայլ ձեռագիրներով: Եղեր են քանի մը արկղեր ալ, որ հաջորդաբար կնքված պահվել են շատ մը վանահայրերու կնիքներով: Թո՛ղ ինչ որ տաճարին այս ու այն կողմը, ինչ որ վանքին միաբանության մոտ ու զանազան անկյունները: Հեղինակը մեծ ցավով գրում է նրանց մասին և նշում, որ ձեռագրերի այդ հսկա գանձարանը անհետ կորել էր: «Տարոնում առհասարակ չկար գյուղ, որ շունենար որևէ կարևոր ձեռագիր...»¹⁰⁸:

1827 թվականին քրդերի հարձակումը ծանր կորուստներ է պատճառում Ս. Կարապետի վանքին, ոչ միայն կողոպտվում են վանքի մեծ հարստությունները, այլև մահացու հարված է հասցվում նրա ձեռագրական բազմահարուստ ժառանգությանը: Վենետիկի Մխիթարյան գիտնականներից Հ. Ներսես Սարգիսյանը նկարագրելով այս դեպքի տխուր մանրամասնությունները, գրում է, որ Ս. Գևորգի պահարանը դատարկացավ բազմաթիվ հնագիր մատյաններից. «էր զորս ի բաց տարան և էր զորս ի մի շեղջեալ լցին ի կաթսայս մեծամեծս և ջուր ածեալ ի նոսա

ջնջեցին զամենայն. էր զորս ի ջուր ջրաղացին ամացեալ՝ ընդ մատամբք ձախարակին հերձոտեալ կորուսին, և էր զորս ձեռք իւրեանց մանր մանր պատառեալ ցրուեցին: Ընդ ձանապարհ վանացն»: Եթե նյութական վնասը հնարավոր էր ժամանակի ընթացքում փոխարինել, ապա գրչագրերի կորուստը ոչնչով հնարավոր չէր հատուցել. ահա այդ մասին ինչ էր գրում նույն հեղինակը. «...Սակայն կարուստ մատենից հնոց՝ վէրս անբժշկելիս գործեաց ի սիրտս ամենայն ուսումնասիրաց, որում չիք այլևս գարման տանել, ոչ ոսկի և արծաթ և ոչ ակունք պատուականք փոխանակեսցին երբէք անհնարին վնասուն»¹⁰⁹:

Հակառակ Ս. Կարապետի և Տարոնի մյուս նշանավոր հայ վանքերի կրած ծանր հարվածներին, պետք է նշել, որ դեռևս մեծ եղեռնից առաջ, Տարոնում բավականին պատկառելի թվով հայերեն ձեռագրեր էին գտնվում: Լավագույն ապացույցը մեր ասածի կազմում է Գեղամ Տեղ-Կարապետյանի (Մշո Գեղամ) անտիպ վիճակում մնացած Տարոնի ձեռագիր հիշատակարանների ստվար ժողովածուն: Նրա այս գործը կազմված էր Լրկու մեծածավալ հատորներից, ուր ընդօրինակված էին Տարոնի շրջանի և վանքերի հին ձեռագրերի «Հիշատակարանները» հազար ուր հարյուր վաթսուհինը ձեռագրերից» (ընդգրծումը մերն է — Ս. Ք.): Դժբախտաբար սակայն այս արժեքավոր գործի առաջին հատորը կորած է և մնում է միայն երկրորդ հատորը, ուր ամփոփված են ութ հարյուր երեսուն մեկ հիշատակարաններ¹¹⁰, որոնք հայ ժողովրդի պատմությանը անգնահատելի ծառայություն կարող են մատուցել: Մեծանուն բանասեր Հ. Ն. Ակինյանի ձեռագրերի հիշատակարանների հարուստ ժողովածուում գտնվում է նաև Մշո Գեղամի այս գործի արտագրությունը: Հիշյալ հիշատակարանների ժողովածուի և Ս. Կարապետի պատմության վերաբերյալ Գեղամ Տեղ-Կարապետյանի ցարդ անտիպ մնացած ժառանգության հետագա հրատարակումը կարևոր ավանդ կլինի հայ ձեռագրագիտության և ընդհանրապես հայագիտության համար, քանի որ, որքան մեզ հայտնի է, շատ քիչ թվով ձեռագրեր հնարավոր եղավ փրկել Տարոնից:

Մեծ եղեռնի ժամանակ մահացու հարված կրեց նաև Տարոնի հայությունը, ինչպես նրա

¹⁰⁸ Հ. Ներսես Սարգիսյան. «Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայք», Վենետիկ, 1864, էջ 230:

¹¹⁰ Գեղամ Տեղ-Կարապետյան, Տարոնի աշխարհ: պատկերներ ու պատմվածքներ (Նահատակ գրադեսներու բարեկամներ, մատենաշար Թիւ 3), Փարիզ, 1931 թ., էջ 15:

¹⁰⁷ «Արևելք», Կ. Պոլիս, 1902, № 4977, էջ 1:

¹⁰⁸ Նույն տեղում:

ղավանդներից, այնպես էլ նրա մշակութային արժեքներից շատ քիչ բան փրկվեց:

Տարոնի հայկական վանքերին և եկեղեցիներին հասած աղետի ահավորության մասին է վկայում թեև ոչ այն փաստը, որ Մուշում և շրջականերում գործող 500 քահանաներից և վարդապետներից միայն մեկ քահանա է փրկվել¹¹¹: Միակ փրկվողը Նդիշե քահանա Պարսամյանն էր, որ հետո էջմիածնից Մուշ ուղարկված հանձնաժողովին մաս կազմեց:

Քարուքանդ արվեցին Տարոնի ամենամիտրական հուշարձանները, Ս. Առաքելոցի և Ս. Կարապետի վանքերը:

Մշեցի Միսակ Բդեյանը իր հուշերում Առաքելոց վանքի մասին գրում էր հետևյալը. «Հուլիս ամսո կեսերին Առաքելոց վանքին մեջ գտնված զինվորները, սկսած էին քանդել վանքին գմբեթները, պարիսպներն ու սենյակները: Ամեն օր առավոտուն մինչև երեկո չարյուրավոր քուրդ շեթեններ բաժնու բրիգադներին, կաշխատեին քարուքանդ ընելու դարերն ի վեր կառուցված այդ սրբավայրը»¹¹²:

Վասպուրականի ձեռագրերի մի մասը փրկելուց հետո, Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսը մտածում է Տարոնում գտնվող ձեռագրերի ճակատագրի մասին: Մուշի ժամանակավոր ազատագրումից հետո, կաթողիկոսը 1916 թվականի մարտի 30-ին մի հատուկ հանձնաժողով է ուղարկում Տարոն. տեղի վերապրող բնակչությանն օգնելու և հայոց անցյալի վերաբերյալ նշխարների մնացորդները փրկելու և էջմիածին բերելու նպատակով: Հանձնաժողովը կազմված էր Խաչակ սարկավագ Տեր-Ղաղարյանից (ապա Գյուլում աբեղա)՝ միաբան Մայր Աթոռի, Ավետիք Տեր-Պողոսյանից՝ Գևորգյան ճեմարանի տեսչի օգնական, Բահաթուր Բահաթրյանից՝ Գևորգյան ճեմարանի ուսուցիչ, բժիշկ խոսրով Փանոսյանից՝ եղբայրական օգնության բժիշկ, և հետևյալ բանիմաց մշեցիներից, որոնք ծանոթ էին Տարոնի բոլոր գաղտնարանների տեղերին. Նդիշե քահանա Պարսամյանից՝ Մուշի Ս. Հարություն եկեղեցու միաբան, Միսակ Բդեյանից՝ Մուշի նախկին քաղաքական ժողովի անդամ, Արամ Յոթիկյանից՝ Մուշի Ձորո Ս. Աստվածածին եկեղեցու աթոռակալ, Հակոբ Ստեփանյանից՝ Մուշի Ս. Կարապետի նախկին սպասավոր: Հանձնաժողովը բավականին մեծ դժվարությամբ ապրիլի 24-ին հասնում է Մուշ:

¹¹¹ Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1916—1920, 4, Պոլիս, էջ 124:

¹¹² «Հարապատ պատմություն Տարոնո», Հեղինակներ Սարգիս և Միսակ Բդեյան, խմբագրեց Աղան Տարոնեցի, 1962, Կահիրե, էջ 436:

Հայրապետական դիվանից տրված գրությամբ հանձնաժողովի վրա դրված պարտավորությունների 5-րդ կետում հատկապես խոսվում էր ձեռագրերի վրա մեծ ուշադրություն դարձնելու մասին. «Վանքերին և եկեղեցիներին պատկանող ձեռագրերի վրա ունենալ առանձին հոգածություն և ըստ կարելիության բոլորը ժողովել: Այս բոլոր իրերը ժողովել, պահպանել շնորհունակ Խաչակ սարկավագի և ձեր հսկողությամբ, արկղերի կամ պարկերի մեջ դասավորել և ապահովել անվտանգ տեղափոխել Մայր Աթոռ»¹¹³:

Հանձնաժողովի անդամները իրենց զեկուցագրում հայտնում էին Տարոնի նշանավոր հուշարձանների ողբալի կացության մասին. նրանք գրում էին. որ «Պատմական մենաստանները, հուշակավոր ուխտատեղիները այնպիսի ավերման են ենթարկվել, որ Զինդիգ-խան—Լենկթիմուրյան ավերածություններն իսկ նսեմանում են ներկայի առաջ:

«Ավելորդ ձեռքը անշունչ քարերի հետ վարվել է այնպես բարբարոսաբար, կարծես պատմական անմոռն կոթողների վրա ևս թափել է յուր վրեժի թույնը: Եկեղեցիները, սբոց գերեզմանները, խաչարձանները քարուքանդ են արել ու կոտորատել: Այս բարբարոս գործողության ազդակներից է եղել նաև վանքերի թաքստոցները գտնելու ձգտումը, որոնց տեղերը երբեմն չիմանալով, ամբողջ շենքը վառողով կամ ուժանակով պայթեցրել են»¹¹⁴:

Ահա թե ինչ տխուր իրականության առաջ են գտնվում Տարոնում էջմիածնի հանձնաժողովի անդամները: Մուշ քաղաքի Ս. Մարինեի եկեղեցի, համանուն թաղում, նախագավթի տանիքը, հարավային և արևմտյան պատերը խորտակված, խաչկալների հետքն անդամ չկա... Նույն քանդված վիճակում են գտնում նաև Ս. Գևորգի անվան մատուռը, Ձորո թաղի Ս. Աստվածածին եկեղեցին, Վերին թաղի Ս. Հարություն եկեղեցին, Բուրի թաղի Ս. Սարգիս եկեղեցին: Ս. Կարապետի վանքի զանգակատան առաջ գտնվող կիսաշրջան սյունազարդ հրապարակ բոլորովին ավերված, զանգակատունը ամբողջովին քանդված, զանգերից երկուսը կոտորատված, մյուսները ընկած են ավերակներում, Մայր Տաճարի գմբեթի բոլոր կողմերի վերին մասից երեք կարգ քարեր քանդված, տաճարի կիսագմբեթի մի մասը քանդված, այլև Ս. Ստեփանոսի և գերեզմանատան (Ս. Կարապետի գերեզմանի) եկեղեցիների կաթողիկոսները ամբողջապես քանդված... ներ-

¹¹³ «Արարատ», 1916, էջ 568:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 579:

ընտանի (գավթի դռները տարված են, հատակը քանդված է, հյուսիսային պատը փորված, երեք սեղաններն էլ խորտակված և խաչկալների հետքն անգամ չկա: Ս. Աստվածածին եկեղեցու հատակը փորփրված, սեղանն ավերված, Վարդ Պատրիկի և Ստեփանե Արծրունու գերեզմանները փորված, Ս. Աթանաղիների գերեզմանը քանդված...: Ս. Գևորգ եկեղեցու սեղանը միանգամայն ավերված, դարանները բացված...¹¹⁵:

Առաքելոց կամ Թադևոսյանց վանք. Թե՛ զանգակատան, Թե՛ դավթի և Թե՛ բուն տաճարի գմբեթները խորտակված են, տաճարի արևելյան պատը նույնպես, տաճարը կիսով չափ լեցուն է քարերով: Տարված են վանքի երեկոս փայտե շինված գեղեցիկ քանդակված հուշակավոր դռները, 2 ճառընտիրները: Արևելյան պատի առաջ թարգմանիչների խաչարձաններն են, մեծ մասը խորտակված, կանգուն է Դավիթ Անհաղթի անվան խաչարձանը, բայց կեսից կոտրած:

Վանահոր, միաբանների և ուխտավորների սենյակները միանգամայն ավերված, ամենից շատ վնասվել է այս վանքը (ընդգծումը մերն է—Ս. Բ.). վանքի արևելյան կողմում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցու պատերի միջից անցքեր են բացված, սեղանն էլ խորտակված է:

Աշտիշատի Ս. Սահակի անվան եկեղեցի. գավթի տանիքը քանդված. տաճարի սեղանի գմբեթավոր շենք, Ս. Սահակի և Շուշանի դամբարանը...:

Մատենավանք. վանքի միջոց շենքը, զանգակատունը կանգուն են, գավթում եղած սեղանները ավերված, գավթի մեջ, անկյուններում կան փորվածքներ: Բուն Տաճարի երեք սեղաններն էլ ավերված, աջ ու ձախ կողմերում եղած գերեզմանները փորված...»:

Արշավախումբը մի առ մի ղնեց Մուշում եղած թաքստոցները. սակայն համարյա բոլորն էլ փորված և թալանված էին: Թուրքերը թաքստոցների տեղերն իմացող հայերին մեծ մասամբ աշխատել են ձեռք ձգել, ենթարկել են սոսկալի տանջանքների և այս ձևով տեղերն իմացել: Ս. Մարինեի թաղում գտնվող հայոց առաջնորդարանի շենքը իր հարակից շենքերով և տներով ոչ միայն գետնին էր հավասարեցված, այլև նրա գաղտնարանը թալանված էր: Հաջի Համիդ Բայրախդար զադեն այստեղից մի քանի պարկ իրեր է տարել առաջնորդարանը այրելուց և քանդելուց առաջ: Ս. Մարինեի թաղ. Ջոթիկյան Գաւապար աղայի տունը, ուր հանձնված էին Ս. Առաքելով վանքի ոսկյա և արծաթյա իրերը, բազմաթիվ տեղերից փորված և թալանված էր: Նույն թա-

ղի Արշակ մանտեսի Իգիթյանի տան թաքստոցը ևս բացված էր և ամեն ինչ տարված: Ջոթիկյան թաղում Միսակ Բղեյանի տունը միջոց չույն խորտակված: Ներքին հարկում եղել է մեծ գաղտնարանը, ուր պահված են եղել Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միության դրամներն ու դիվանը, ամբողջ գաղտնարանը հնուց բացված և հանված է: Նույն բախտին են արժանացել նաև Ջոթիկյան Նահապետ մանտեսի Հակոբյանի տունը, ուր թաղված էին Ս. Աստվածածին եկեղեցու գույքը, բացի սրբազան անոթներից, ինչպես նաև նույն թաղի Կառապետ էֆենտի Թյուքուենյանի տունը, ուր պահված էին Ս. Աստվածածին եկեղեցու անոթները և հնչակյանների դրամները¹¹⁶: Ականատես մշեցի Բղեյանը նշում է, որ իրենց թաղի եկեղեցու բոլոր սալահատակները վերցված և տեղ-տեղ ալ մինչև երկու-երեք մետր խորությամբ փորված են, որով մեր գիտությանը ի պա՛ղոված բոլոր եկեղեցապատկան իրերենները ամբողջությամբ թուրքերու կողմն հանված ըլլալը կարձանագրվի»¹¹⁷:

Կասկածից վեր է, որ հիշյալ եկեղեցիների և գաղտնարանների մեծ մասի մեջ պետք է թաքցված լինեին նաև բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: Սակայն դժբախտաբար թաքնված իրերենների վերաբերյալ մենք չունենք ոչ մի ցուցակ ի ձեռին, որպեսզի կարողանանք իմանալ, թե ինչպիսի՛ արժեքներ մենք կորցրեցինք, կորուստված հիշյալ տաճարներում և գաղտնարաններում:

Ս. Կարապետի նախկին սպասավոր Հակոբ Ստեփանյանը մայիսի 3-ին դիտեց վանքի գաղտնարանները և հայտնեց, որ մնացել է անվնաս ամենամեծ և ամենակարևոր գաղտնարանը, մյուսները քանդվել, բացվել են: Այստեղից հանվեցին Ս. Կարապետի վանքի զգեստները, սպասները և փոքրաթիվ ձեռագրերը, որոնք ցուցակագրվելուց հետո հանձնաժողովի կողմից բերվեցին և հանձնվեցին էջմիածնի վանքին¹¹⁸: Հանձնաժողովը ստացել է նաև 21 ձեռագրեր Մուշում զանազան անձնավորություններից: Հստ Գաղտնիկյան ցուցակի, Մուշից էջմիածնի բերված գրականության քանակը եղել է 155 կտոր, որից հայերեն ձեռագրեր՝ 99, Հետագայում սրավրա ավելացան ևս 3 ձեռագրեր, որով Մուշից փրկված հայերեն ձեռագրերի ընդհանուր քանակը հասավ 102-ի:

Մաշտոցի անվան մատենադարանի ավագ դիտակալն աշխատող Օ. Նզանյանի պարզած տվյալների համաձայն, Ս. Կարապետի ձե-

¹¹⁵ Նույն տեղում, էջ 579—580:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 581, 571—572:

¹¹⁷ «Հարազատ պատմություն Տարոնո», էջ 488:

¹¹⁸ «Արարատ», 1916, էջ 573:

ռազմերի վրա կան համարներ, որոնք հասնում են մինչև № 1—128, որից բաց են մնում 73-ը, ուստի, եթե ենթադրելու լինենք, որ այդ համարները ընդգրկում են Մուշի Ս. Կարապետ վանքի մինչև 1915 թվականը ունեցած բոլոր ձեռագրերը, ապա պետք է հաշվել այն մտքի հետ, որ ձեռագրերի գրեթե կեսը (73 ձեռագիր) կորած է¹¹⁹։ Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին Սրվանձրտյանցը Ս. Կարապետի վանքում գտել էր 139 ձեռագիր և հրատարակել նրանց անվանացանկը։

Սակայն մի քանի այլ փաստերից ապացուցվում է, որ Ս. Կարապետի ձեռագրերի թիվը 1906 թվականին հասել էր 165-ի, առանց հաշվելու եկեղեցում գտնվածները։ Ահա թե ինչ ենք գտնում 1906 թվականին գրված Նղիշ վարդապետի կողմից. 1657 թվականին Շոռոթի կուսանաց անապատում Մարգարիտ գրչուհու կողմից ընդօրինակված Գրիգոր Տաթևացու և այլոց կողմից հեղինակված մի քարոզգրքի վերջում.

«1906 ամի ցմարտ 31: Սուրբ Կարապետի վանուցս գրադարանին մեջ գտնված ամբողջ ձեռագիր մատյաններն աչքե անցուցի, և զամենքն պրպտելով թվահամարով, թղթահամարով, հիշատակարաններով իրենց մեծությամբ և դրից չափովն ու ձևով, գրչության տեսակով և այլն մանրամասնությամբ, հեղինակներու և հիշատակ տվողներու անունով, առանձին ցուցակ պատրաստեցի և որոյ թիվն ամբողջացնելով 165 հատ, հարյուր վաթսու և հինգ հատ լրացավ. բացի սուրբ եկեղեցին գտնված ավետարաններն և այլ ձեռագիրներն, որոց ցանկն առանձին պատրաստելով կմնա սուրբ եկեղեցին։ Առ այժմ առձեռն ցուցակավ կմնան, մինչև նոր մաքրելով, ամբողջովին թիվն օրինավորությամբ գրեմ։ Նղիշն վ[արդապետ]»¹²⁰։

Դժբախտաբար այս արժեքավոր ցուցակի հետքն իսկ չկա այսօր։

Մուշից ստացված ձեռագրերից մեկը Ս. Կարապետի եկեղեցական իրերի ցուցակն է, որն ունի հետևյալ խորագիրը. «Ցուցակ եկեղեցական գույքի և սրբազան անօթոց և սրբոց հրաշագործ մասանց, որք են ի վանս Սրբոյն Յովհաննու Կարապետի Տարօնոյ, յանձնեալ խնամոց և զգոյշ աւանդապահութեան նորընտիր լուսարար Կարապետ վարդապետի,

յետ վախճանելոյն նախկին լուսարար Տէր Թադէոս վարդապետի նաշատուրեան։

Ի 1902 ամի Փրկչական թուոյն»։

Սույն ցուցակում իբրև եկեղեցական գրեանք Ա. կարգի» հիշվում են 9 ձեռագիր, որից մագաղաթյա ավետարաններ և մեկ շարական, որոնք բոլորն էլ հասել են Մատենադարան։ Իբրև Բ կարգի ձեռագրեր հիշատակվել են 16 թղթյա ավետարաններ, որոնց միայն 10-ն է պահվում Մատենադարանում¹²¹։ Այսպիսով հավանական է, որ սույն ցուցակում առկա եղող 25 ձեռագրերը 1906 թվականին հիշատակված եկեղեցու այն ավետարաններն են, որոնց «ցանկը» խոստացվում էր հետագայում կազմելու Եթե նկատի ունենանք նախորդ ցուցակում հիշված 165 ձեռագրերն ու ներկա 25 ձեռագրերը, ապա դեռ 1902 և 1906 թվականների տվյալներով, կստանանք ընդամենը 190 ձեռագիր, սակայն եթե նկատի ունենանք նաև այն, որ, ինչպես հիշված է առաջին ցուցակում, բացի ավետարաններից, 1906 թվականին եկեղեցում եղել են նաև «և այլն ձեռագիրներ», և, ինչպես առաջին ցուցակը, նաև այս վերջինը, կարող էին նորանոր ձեռագրերի նվիրատվությամբ հետագայում ավելացած լինել. պետք է ենթադրել, որ 1915 թվականի սկզբին Ս. Կարապետ վանքի ձեռագրերի թիվը ամենայն հավանականությամբ 200-ից ավելի էր։

Ս. Կարապետից փրկված ձեռագրերից, հատկապես մեծ արժեք է ներկայացնում այժմ Մաշտոցի անվան Մատենադարանի համար 9422 մագաղաթյա արժաթապատ ավետարանը, որի հանգամանակից նկարագրությունը տվել է պատմական գիտությունների ղեկավար Ասատուր Մնացականյանը¹²²։ Նրա ծաղկողը ամենայն հավանականությամբ եղել է Կիրիկյան Հայաստանի ամենանշանավոր զարդանկարիչ Թորոս Ռոսլինը։ Ձեռագիրը չունի հիշատակարան, սակայն կասկածից վեր է, որ այն գրվել է և պատկերազարդվել Կիրիկիայում ԺԳ դարի երրորդ քառորդում։ Այս ձեռագրի հոյակապ մանրանկարները այն դասում են հայկական մանրանկարչության լավագույն հուշարձանների շարքում¹²³։ Սույն գրչագիրը բացառիկ արժեք է ներկա-

¹¹⁹ Օ. Եզանյան, նշված աշխատությունը, էջ 107։

¹²⁰ Մաշտոցի անվան մատենադարանի № 5875 ձեռագրի թ. 251 (օգտվել ենք Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի նշված աշխատության միջնորդությամբ, ուր նշված էր ձեռագրի համարը՝ 1268, որը համապատասխանում է նոր ժողովածուի համարներին)։

¹²¹ Մաշտոցի անվան մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 51։

¹²² Ա. Շ. Մնացականյան, «Հայկական զարդարվեստ...», Երևան, 1955, էջ 629—641։

¹²³ Լ. Ռ. Ազարյան, «Կիրիկյան մանրանկարչությունը XII—XIII դ. դ.», Երևան, 1964, էջ 143—145։

յացնում մեր ձեռագրերի պատմության համար ևս¹²⁴։

Ինչպես վերևում նշեցինք, Ս. Կարապետից շատ ավելի ողբերգական վախճան վիճակվեց Տարոնի Ս. Առաքելոց վանքին ու նրա մշակութային հարստությանը։ Ս. Առաքելոց վանքից, որքան մեղ հայտնի է, փրկվեցին և բնակությանը սարքված քանդակազարդ նշանավոր դռները, փորագրված 1134 թվականին, և հայերեն ձեռագրերի հսկան՝ Մշո նշանավոր Ճառընտիրը, ընդօրինակված 1201—1204 թվականներին։ Մեր հոգովածի սկզբում խոսեցինք այդ բացառիկ մատյանի ծագման, դերության և ազատագրման հետ կապված սրտահույզ մի քանի դեպքերի մասին։

Մշո Ճառընտիր հսկան շուրջ 700 տարի մնաց Ս. Առաքելոց վանքում և դարձավ շատաշատերի հիացման և գուրգուրանքի առարկան։ 1847 թվականին Մխիթարյան դիտնականներից Հ. Ներսես վարդապետ Սարգիսյանը Վենետիկից Մուշ գնալով ընդօրինակում է այս հսկա ձեռագիրը, իր կողմից կցելով նաև մի հիշատակագրություն, որից մենք բերում միայն սկզբի մասը. «Քննադիր Ճառընտիրս, յորմէ քաղելով օրինակեցաւ սա, երկաթագիր էր՝ եռիջնան, մագաղաթեայ, ահաւոր մեծութեամբ, պատկանելի մանանյան տեսողաց, պատուեալ յամենայն ժամանակի յուխտաւորաց»¹²⁵։

Սույն ընդօրինակությունը պահվում է Վենետիկի մատենադարանի 228 համարի տակ։ Նույն Հ. Ն. Սարգիսյանը հիշյալ Ճառընտիրից իբրև նմուշ 17 թերթ տարել է Վենետիկ,

¹²⁴ Ինչպես երևում է վերահիշյալ ձեռագրի հիշատակարաններից, գրչագիրը երկու անգամ գերի է ընկել օտարների ձեռքը՝ ԺԴ և ԺԸ դարերին և աղատվել է հայերի կողմից։ ԺԶ դարի երկրորդ կեսին այս ձեռագիրը այլ գրչագրերի հետ, փոխել էր և որոշ մասեր անընթեռնելի լինելով, Ս. Կարապետի վանականների կողմից հանձնվել էր հողին։ Սակայն Սիմեոն անունով մի գրասեր սարկավագ, գրչագրին վիճակված ճակատագրից մեծ վիշտ ապրելով, հանում է այն թաղված տեղից և փրկելու նպատակով տանում է Ամիդո կազմարար Տրիկը սակայն ձեռագիրը կաղմբուլ ժամանակ ծանր հիվանդանալով, հրաժարվում է այն վերանորոգելուց, աւելով, որ նրա պատճառով է ինքը հիվանդացել։ Սիմեոնը սակայն դատավորի միջոցով սպառնում է կազմարարին և ի վերջո ձեռագրի նորոգությունը ավարտել տալով 1574 թվականին փրկում է այս գանձը ստույգ ուղնացումից և կրկին հանձնում Տարոնի Ս. Կարապետի վանքին։

¹²⁵ Հ. Բաբսելյ վ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ», հատոր երկրորդ, Վենետիկ, 1924, էջ 488։

որոնք այժմ պահվում են Մխիթարյան մատենադարանի 229 համարի ներքո¹²⁶։

1915 թվականի մեծ եղեռնին Առաքելոց վանքի վանահայր Հովհաննես վարդապետ Մուրադյանը նահատակվեց վանքի սյամբի վրա¹²⁷, իսկ վանքը, ինչպես նշեցինք, քարուքանդ արվեց և թալանվեց։ Գեղամ Տեր-Կարապետյանի ձեռագրերի հիշատակարանների ժողովածուում կան հիշատակված բազմաթիվ ձեռագրեր ԺԴ—ԺԸ դարերից, դրված Առաքելոց վանքում, սակայն նրանցից համարյա ոչինչ չի փրկվել։ Հայ ժողովրդի ստեղծած երկու հրաշալիքները՝ Առաքելոց վանքի քանդակազարդ դուռն ու Ճառընտիր հսկան էլ վերցվել էին գերմանացի մի սպայի կողմից և փոխադրվել Բիթլիս, որտեղից պետք է ուղարկվեին Բեռլին։ Սակայն հայ ժողովրդի հերոս զորավար Անդրանիկի իշղնողով միասին Բիթլիս մուտք գործելը բոլորովին փոխեց գերմանացի սպայի ծրագրերը։ Այդպիսով խուճապահար թշնամին դնալի Սղեբոց նահանջելով, Բիթլիսում ստիպվեց թողնել այդ երկու անդին դանձերը¹²⁸։ Ասպահովարար, սրանից հետո է, որ հայրենի տունն ու տեղը թողած գաղթականներ իրենց հետ տանում են պապերի ավանդած մատյանները։ 32 կիլոգրամ կշռող հսկա ձեռագիրը ավելի հեշտ տեղափոխելու համար բաժանում են երկու մասի։ Պատմում են, որ նրա մի մասը տանում են բոլորովին այլ ճանապարհով և հասցնում էջմիածին՝ մատենադարան, մյուսը, չկարողանալով ավելի հեռու տանել, թաղում են էրզրումի եկեղեցու բակում։ Փլատակների տակ պատահաբար հայտնաբերված այս կեսը հետագայում տարվում է Բաբու 1921 թվականին ձեռագիրը բերվեց Բիթլիսի, որտեղից և տեղափոխվեց Մատենադարան¹²⁹։

¹²⁶ Նույն տեղում, էջ 477—482։

¹²⁷ Հ. Համազասպ Ոսկյան, «Տարոն-Տուրուբերանի վանքերը», Վենետիկ, 1953, էջ 80—81։

¹²⁸ Կ. Ս. «Պատմություն Տարոնի աշխարհի», Բեյրութ, 1958, էջ 1052—1053։

¹²⁹ Գեորգ Աբգարյան, «Մշո Ճառընտիրը կամ մագաղաթյա հսկան», «Երևան», Երևան, 1958, № 125 (190), էջ 3։

Սույն նշանավոր Ճառընտիր երկու մասերի հայտնաբերումը պատմվում է նաև հետևյալ կերպ. «1919 թ. Թրիֆսիի «Ազգագրական հանդես»-ի խմբագրատունն է գալիս մի լեհ սպա և Ճառընտիր առաջին մասը նվիրում խմբագրատանը։ Հավանական է, որ լեհ սպան առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ ծառայելով ռուսական զորամասերում, Մուշում եղած ժամանակ՝ ձեռագիրը կիսում է և մի մասը վերցնում է իր հետ՝ լեհաստան տանելու նպատակով։ Սակայն լեհաստանի ճանապարհները փակ լինելու պատճառով,

Մաշտոցի անվան մատենադարանի ցուցասրահում այժմ 7729 համարը կրող ձեռագիրը Մշո Ճաղընտիր հսկան է, մեր ժողովրդի պատմական հակատագրի մեծագույն վիճակն ու մեծ եղբունից վերապրող մեր մշակութային լավագույն խորհրդանիշը:

Մուշի արևմտյան կողմում, Ս. Կարապետի դիմաց գտնվող Նղդղուտի Ս. Հովհաննեսյանները ևս ունեցել է բավական թվով հնություններ (հրովարտակ, կոնդակ և ձեռագիր)¹³⁰, Սասունում՝ Մասնեկները կամ Ս. Պետրոս առաքյալի վանքը ևս հիշվում է, որ հարուստ է եղել ձեռագրերով¹³¹: Սակայն, որքան հայտնի է, այս վանքերից ոչինչ չի փրկվել: Ոչնչացել են Տարոնի տարբեր մասերում գտնվող բազմաթիվ այլ հուշարձաններում եղած գրչագրերը:

Այս բոլոր հիշատակություններից հետո, մենք թյուրիմացության արդյունք ենք համարում վերջերս հաստատված այն տեղեկությունը, ըստ որի հայտնվում է, որ Ս. Կարապետի գաղտնարանից 1916 թվականին հանվել են նաև 1750 կամ 1700-ից ավելի հին ձեռագրեր և փոխադրվել Ս. Էջմիածին¹³²: Ամենայն հավանականությամբ, այդ շփոթությունը առաջացել է նույն ժամանակ Տարոնի հարևան Վասպուրականից փրկված և հիշյալ քանակին մոտ եղող ձեռագրերի թվի հետևանքով: Որ Տարոնի իր շրջակա մասերով կարող էր ունենալ մինչև մեծ եղբունը նշված քանակի չափ և է՛լ ավելի ձեռագրեր, այդ հավաստում է Գեղամ Տեր-Կարապետյանի 1869 ձեռագրերից քաղած վերահիշյալ հիշատակարանների հարուստ ժողովածուի միջոցով, սակայն Մաշտոցի անվան մատենադարանում, բացի փրկված 102 հայերեն ձեռագրերից, Մուշից բերված այլ ձեռագրերի մասին այլ արձանագրություններ գոյություն չունեն: Նկատի ունենալով, որ Տարոնի բոլոր հուշարձաններն էլ քարուքանդ են արվել և կամ թալանվել, ուստի պետք է նշել, որ մեծ թվով ձեռագրեր ոչնչացել են նաև այստեղ:

Հիմնվելով մի ականատեսի տվյալների վրա, պետք է խոր ցավով արձանագրել, որ

նա ստիպված է լինում նվիրել այն խմբագրությանը: Նույն թվականին արվեստի վաստակավոր գործիչ Գ. Լև Վոնյանի մոտ են գալիս երկու կին և առաջարկում դնել մի մեծ ձեռագիր: Պարզվում է, որ հենց դա Մշո Առաքելոց վանքի Ճաղընտիր պակաս մասն էր: (Տե՛ս Ավ. Աղամյան, Ամենամեծ և ամենափոքր հայ ձեռագրերը, «Ավանգարդ», 1947, 15 մարտի, № 25 (4730)):

¹³⁰ Զ. Է. Ոսկյան, «Տարոն-Տուրուբերանի վանքերը», Վիեննա, 1953, էջ 127:

¹³¹ Նույն տեղում, էջ 250:

¹³² Կ. Ս., «Պատմություն Տարոնի աշխարհի», Լջ 294 և 1053:

Մուշում, այնքան շատ է եղել ոչնչացված մեր մեծագույն ձեռագրերի թիվը, որ բազմաթիվ արժեքավոր մատենագրեր և եկեղեցական դրքերի թերթեր Մուշի շուկայում 1915 թվականի սև օրերին տղևու ու մուկոտանդ յուրյա խանութպանների կողմից իբրև մթերքներ փաթաթակու թուղթ են օլտագործվել¹³³:

Մուշից մեղ շհասած արժեքավոր ձեռագրերի թվումն է Տարոնի Ս. Հովհաննեսյանների կողմից սահմանված երկաթադիր մագաղաթյա ավետարանը, ընդօրինակված 1176 թվականին Սևրաստիայում¹³⁴:

Նախնական տվյալներով, ամենայն հավանականությամբ շուրջ 2 հազար և Տարոնում մեր ձեռագրական կորուստների թիվը: Ինչ վերաբերում է փրկվածներին, առաջինը միայն աննշան մասն են կալմում Տարոնի ձեռագրերով այնքան հարուստ եղող մեզ կենտրոններին:

Ձեռագրերով հարուստ էր Կարեն շրջանը: 1828 թվականի դադարալիության ժամանակ, Բաղրատունի Կարապետ արքեպիսկոպոսը եկեղեցական թանկարժեք սպասաների, պատկերների և ձեռագրերի մի մասը փոխադրել էր Ախալցխա: Բաղրատունի Կարապետ արքեպիսկոպոսը իր նվիրակ Գրիգոր վրդ. Շաքարճյանի ձեռքով հիշյալ ձեռագրերը Մուշի և Բաղնջի շրջաններից էս հավաքել: Պարզվում է, որ Ախալցխա տեղափոխված հիշյալ ձեռագրերի թիվն է եղել 106, և նրանք միայն 1868-ին է, որ Ախալցխայից տեղափոխվել են Էջմիածնի մատենադարանը: Նշված 106 ձեռագրերից 13-ը կորել է, մատենադարան մուտք է դործել 93 ձեռագիր¹³⁵: Այս ձեռագրերի մեջ առանձնապես մեծ արժեք է ներկայացնում այժմ Մաշտոցի անվան մատենադարանի մեծագույն գոհարներից մեկը հանդիսացող թղթյա հնագույն ձեռագիրը, դրված 971 թվականին: Նա նշանավոր է ոչ միայն իր պատկերների տարիքով, քանի որ նա թղթի վրա գրված աշխարհի հնագույն ձեռագրերից մեկն է, այլև շատ հարուստ է իր բովանդակությամբ:

Կարինից որոշ թվով ձեռագրեր, սկսած 1815 թվականից, ինչպես նաև 1846—1850, 1875 և այլ թվականներին տեղափոխվել են Վենետիկի Մխիթարյան մատենադարանը: Այդ ձեռագրերից կարելի է հիշատակել երկու հնագույն ավետարաններ, մեկը ընդօրինակ-

¹³³ «Հուսարներ», Կա՛իրե, 11 հոկտեմբեր 1958, № 162:

¹³⁴ Իսրայիլյան Ա. Կարողիկոս, «Հիշատակարանը ձեռագրաց», № 213:

¹³⁵ Օ. Նզաճյան, նշված աշխատությունը, էջ 52—53:

ված 1001 թվականից հետո և մյուսը՝ Ժ—ԺԲ դ. դ.¹³⁶:

Ինչպես երևում է Հ. Հ. Տաշյանի և Հ. Հ. Ոսկյանի ձեռագրացուցակներից, Վիեննայի հայրերը ևս Կարինում բավական թվով ձեռագրեր են հավաքել և ուղարկել Վիեննայի Մխիթարյան մատենադարանը: Հ. Համազասպ Չամանյանը 1872 թվականին Կարինից Վիեննա է ուղարկել երկու ձեռագիր, իսկ 1875 թվականին էլ մեկ ձեռագիր: Սակայն Կարինից շատ ավելի մեծ թվով ձեռագրեր է հավաքել և ուղարկել Վիեննա Հ. Օգոստինոս Ամրիկյանը: 1891 թվականին նա Վիեննա է ուղարկել 9 ձեռագիր: Այսպիսով, 19-րդ դարի վերջում Կարինից Վիեննա է բերվել 12 ձեռագիր¹³⁷, Սակայն Կարինից բերված ձեռագրերի թիվը շատ ավելի մեծ է եղել 1910 և հատկապես 1911 թվականներին, մինչև Քոստանի հիշյալ ցուցակների կազմումը: Ձեռագրերի մեծ մասը Կարինից Վիեննա է ուղարկել դարձյալ Հ. Օգոստինոս Ամրիկյանը, իսկ մի քանիսն էլ՝ Հ. Քերովբե Հովնանյանը: Այս շրջանում Կարինից Վիեննայի Մխիթարյան մատենադարանը մուտք գործած ձեռագրերի թիվն է եղել 32 ձեռագիր¹³⁸, այդ թվում անհրաժեշտ է հիշատակել Ժ—Ժ դարերի ավետարանի պատառիկներ (խորան և նկարներ), Հոռմկլայում 1235 թվականին ընդօրինակված մի ավետարան և այլն:

Այստեղ ևս 1895—1896 թվականների կոտորածների ժամանակ ձեռագրեր ոչնչացան: Կարինում գտնված հայերեն ձեռագրերը հայագիտությանը ճանաչելի դարձնելու և ուսումնասիրելու գործում, կարևոր ծառայություն են մատուցել բազմապատակ հայագետ Հրաչյա Աճառյանն ու Մխիթարյան ժրագետ մշակ Հ. Հ. Քոսյանը:

Կարինում Սանասարյան վարժարանը ոչ միայն եղել է ուսումնական նշանավոր մի հաստատություն, այլև դիրք է գրավել նաև իր թանգարանով ու մատենադարանով: Ձեռագրերն այստեղ սկսում են հավաքվել վար-

ժարանի հիմնադրության թվականից (1831 թ.), այլևայլ անձանց նվիրատվությամբ և վարժարանի տեսչության կողմից կատարված գնումների միջոցով: Հ. Աճառյանը 1895 թվականի ամռանը Կարինում առաջին անգամ ցուցակագրում է Սանասարյան վարժարանի գրչագրերը, որոնց ընդհանուր թիվը այդ ժամանակ հասել էր 43-ի: Հիշյալ ցուցակը 1896—1897 թվականներին մաս առ մաս Վիեննայի «Հանդես ամսօրեայ»-ում հրատարակվելուց հետո, 1900 թվականին լույս տեսավ առանձին, սկզբի մասում ունենալով նաև նյութի գերմաներեն համառոտագրությունը¹³⁹:

Սանասարյան վարժարանի 1906 թվականի պաշտոնական մի տեղեկագրի համաձայն, այս ժամանակ այստեղ հավաքված գրչագրերի թիվը հասել էր արդեն 78-ի: Սրանք պահվում էին վարժարանի թանգարանի ԺԳ պահարանում, ուր կային նաև հավաքված փղոսկրյա դտնազան արժեքավոր առարկաներ և ճապոնական հնություններ:

1912 թվականին Հ. Հ. Քոսյանը շարունակել է Աճառյանի ցուցակից հետո Սանասարյան վարժարանում մուտք գործած ձեռագրերի նկարագրության գործը: Այս ժամանակ արդեն գրչագրերի թիվը հասել էր 94-ի: Հ. Քոսյանն իր ցուցակը սկսել է հրատարակել դարձյալ «Հանդես ամսօրեայ»-ում սկսած 1912 թվականից, սակայն մեծ ընդհատումներով նրա տպագրությունն ավարտվել է միայն 1921 թվականին¹⁴⁰, Անհրաժեշտ է նշել, որ Սանասարյան վարժարանի ձեռագրերը հիշյալ 54 գրչագրերից հետո, պետք է որ ավելացած լինեն մինչև 1915 թվականը, քանի որ Մաշտոցի անվան մատենադարանում Սանասարյան վարժարանից մուտք գործած ձեռագրերում կան նաև 7 գրչագրեր, որոնք չկան նկարագրված ո՛չ Աճառյանի և ո՛չ էլ Քոսյանի ցուցակներում, և պետք է, որ ավելի ուշ հավաքված լինեին հիշյալ հավաքածուում: Նրանցից միայն մեկն է, որ մուտք է գործել Մատենադարան 1880-ական թվականներին¹⁴²: Սակայն պետք է կարծել նաև, որ հիշյալ 101 ձեռագրերից ավելի էլ կարող

¹³⁶ Հ. Բաբեղյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց. մատենադարանին Մխիթարյանց ի վիեննայի», Ա, Վենետիկ, 1914, ձեռագիր № 113, 126, 139 և այլն:

¹³⁷ Հ. Հակոբյան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի վիեննայի», Վիեննա, 1895, ձեռագիր № 148, 170, 179, 15, 66, 136, 156, 157, 168, 180, 199, 309:

¹³⁸ Հ. Համազասպ Ոսկյան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի վիեննայի», Վիեննա, 1963, ձեռագիր № 697, 701, 702, 740, 762, 781, 785, 792, 810, 829, 830, 833, 841, 867, 888, 893, 896, 910, 914, 917, 920, 923, 968, 982, 985, 994, 996, 1003, 1017, 1019, 1024, 1045:

¹³⁹ Հրաչյա Հ. Աճառյան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին», Վիեննա, 1900:

¹⁴⁰ Ղազար Զարբ, «Հուշամատյան Բարձր Հայրի, Կարինապատում», Բելյուս, 1957, էջ 215:

¹⁴¹ Հ. Հ. Քոսյան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին», «Հանդես ամսօրեայ», 1912, էջ 55, 61, 1921, էջ 173—181, 486—493, 580—583:

¹⁴² Օ. Եգանյան, նշված աշխատությունը, էջ 157:

էր լինել Սանասարյան վարժարանի գրչագրերի ընդհանուր թիվը մինչև 1915 թվականը, քանի որ, ինչպես տեսնելու ենք, անդամ Աճառյանի և Քոսյանի կողմից նկարագրված ձեռագրերի որոշ մասը մեզ չի հասել: Այսպիսով հնարավոր էր, որ լինեին նաև այդ ցուցակներից դուրս մնացած այլ ձեռագրեր ևս, որոնք դարձյալ անհետ կորել են:

Կարծում ենք ավելորդ չի լինի, եթե նշենք նաև Սանասարյան վարժարանի ճոխ և բաղմալեզու գրադարանի մասին, որը կազմված էր 6000-ից ավելի գրքերից¹⁴³: որոնց մեջ, բացի դասական գործերից, կային նաև նորագույն գիտական և մանկավարժական հատորներ հայերեն, ղերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն և ուսման լեզուներով, որոնք ոչ միայն դյուրացնում էին ուսուցիչների ղործը, այլև առատ նյութ հայթայթում ուսանողությանը¹⁴⁴: Շատ հարուստ էր Սանասարյան վարժարանի թանգարանը իր կենդանաբանական, մարդակալական, բուսաբանական, հանրային և երկրաբանական հավաքածուներով: Հիշատակության արժանի էր եգիպտական մումիան, 538 կտոր հին գրամների հավաքածուն (ոսկի, արծաթ և պղինձ)¹⁴⁵, նշանավոր նկարիչների՝ Ռուբենսի (2), Ալվազուվսկու (4), Բոսսանի, Վերսալագինի, Օուլվի, Ներսիսյանի և ուրիշների գործերը, Կարնո դաշտի վայրի կենդանիներ և թռչուններ զմայլած կամ շշուկ ալուհուրի մեջ դրված՝ շուրջ 500 հատ, լինական, հնդկական, արվեստի գործեր, հնու-թյուններ, մամոնտի ոսկորներ և այլն¹⁴⁶:

Հայերեն ձեռագրերի ժողովածու ուներ նաև Կարինի Արծնյան վարժարանը, որի տեսչությունը դեռևս 1865 թվականից սկսել էր հավաքել գրչագրեր և տպագիր գրքեր: Ձեռագրերը մեծ մասամբ ձեռք էին բերվել ինչպես քաղաքի, այնպես էլ մերձակա եկեղեցիներից և վանքերից: 1912 թվականին Արծնյան վարժարանում արդեն կար 62 ձեռագիր և 1632 հատոր տպագիր դիրք: Ծպագիր գրքերի մեծ մասը հետո տարվեց «Երիտասարդական միության» հավաքածուին¹⁴⁷: Դարձյալ Հ. Հ. Քոսյանն է, որ նույն 1912 թվականին, իր պաշտոնավարության ընթացքում, կազմել է նաև Կարինի Արծնյան վարժարանի ձեռա-

գրաց ցուցակը, ուր նկարագրել է հիշյալ 62 ձեռագրերը, և կարևոր գյուղերում եղած ձեռագրերի ցուցակը, 33 ձեռագրերի նկարագրությամբ: Հիշյալ ձեռագրացուցակները միայն վերջերս է, որ հրատարակվեցին դարձյալ «Հանդես ամսօրեայ»-ում¹⁴⁸:

Այսպիսով, շնորհիվ Աճառյանի և հատկապես Քոսյանի ջանքերի, մեզ հայտնի են դարձել Կարինից և նրա գյուղերից ընդամենը 189 գրչագրեր: Կասկածից վեր է, որ այս թիվը ամբողջական լինել չի կարող, քանի որ Կարինի նախ ոչ բոլոր վայրերի և մանավանդ անհատ մարդկանց մոտ ղտնվող ձեռագրերն է որ նկարագրվել են հիշյալ ցուցակներում, իսկ Երկրորդ՝ եղած տվյալները վերաբերում են մինչև 1912 թվականը և ոչ թե 1915 թվականը, երբ մինչ այդ ցուցակագրված հիշյալ հավաքածուները կարող էին նորանոր ձեռագրերով ավելացած լինել, ինչպես այդ տեղի է ունեցել Սանասարյան վարժարանի հետ, որի ժողովածուին Երբեմն մաս կալմող ձեռագրերը ղտնվում են Մաշտոցի անվան մատենադարանում, և որոնք ուսկայն, ինչպես ասացինք, բացակայում են հիշյալ վարժարանի ձեռագրաց ցուցակից:

Այժմ տեսնենք, թե ինչ է մեզ հասել Կարինից, թեկուզ մեղ ծանոթ Եղող հիշյալ 196 գրչագրերից: Ըստ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի անտիպ մի ուսումնասիրության, «Կարինի ձեռագրերը ևս անկորուստ բերվել են Երևանի թանգարանը»¹⁴⁹: Սակայն ղծբախտաբար եղած փաստերը մեզ բոլորովին այլ բան են վկայում:

Անղամ Կարինի Սանասարյան վարժարանի ձեռագրերը լրիվ մուտք չեն գործել Մատենադարան: Աճառյանի և Քոսյանի ցուցակագրած 94 ձեռագրերից այժմ անհետ կորել են 33 գրչագրեր: Կորածների թվումն է 1323 թվականին ընդօրինակված մի Շարակնոց-Տոնացույց և Ավետարանացույց և այլն:

Երբ Սանասարյան մատենադարանն ու գույքերը (100 սնդուկ) Կարինից Սեբաստիա պետք է տեղափոխվելին, սնդուկների մեծ մասը կորչում է, կենդանական ու պատմական թանգարանները փչացած, ղենքը հիվանդանոցի վերածված և բազմաթիվ գրքեր

¹⁴³ Հ. Հակոբ վ. Քոսյան. «Բարձր Հայք», Ա, Վիեննա, 1925, էջ 232:

¹⁴⁴ Կաղար Զարբգ, նշված աշխատությունը, էջ 228:

¹⁴⁵ Հ. Հ. Քոսյան. նշված աշխատությունը, էջ 232:

¹⁴⁶ Կաղար Զարբգ, նշված աշխատությունը, էջ 214—215:

¹⁴⁷ Հ. Հ. Քոսյան, «Թուրքական հայերեն ձեռագրաց Արծնյան վարժարանի ի Կարին», «Հանդես ամսօրեայ», 1961, էջ 102:

¹⁴⁸ Տե՛ս Հ. Հ. Քոսյան. «Թուրքական հայերեն ձեռագրաց Արծնյան վարժարանի ի Կարին», «Հանդես ամսօրեայ», 1961, էջ 102—136, 312—329, 1962, էջ 30—57, 174—182, 339—352: Նույն հեղինակի «Թուրքական հայերեն ձեռագրաց Կարնո գյուղերում», «Հանդես ամսօրեայ», 1963, էջ 23—28, 207—220, 371—390, 505—514, 1964, էջ 29—38, 153—160, 323—332:

¹⁴⁹ Հայկական ՍՍՀ դիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ղիվան (Վերջերս տեղափոխված Մատենադարան):

էլ ընկել էին գետնին... Կարինի Սանասարյան վարժարանի պրոֆ. Ս. Սողկյանը, որ քաջ հայտնի էր իր անսահման գրասիրության, մեծագույն մխիթարությունը կունենա, երբ փոշիների մեջ ի հայտ կբերի «այնքան նշանավոր Ավետարանը, որ հնության կարգով երրորդն էր և անկյուն մը նետված», գզրոցի մեջ կգտնե հայկական, պարթևական, հռոմեական և բյուզանդական հին դրամներ»¹⁵⁰:

Հիշյալ հնագույն ձեռագիր ավետարանը անշուշտ Սանասարյան վարժարանի ձեռագրերի զարդը կազմող 986 թվականին գրված ավետարանը պետք է լինի, որի մի մասը կրկնագիր է և ըստ մասնագետների կարծիքի, գրված պետք է լինի Ե—Ձ դարերին: Այդ ձեռագիրը այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի 7735 համարի տակ:

Սանասարյան վարժարանի ձեռագրերի ժողովածուին երբեմն մաս կազմող մի ձեռագիր Սաղմոս ընդօրինակված 1596—1597 թթ. տեսել ենք Բուխարեստում Ռումինահայոց Թեմական խորհրդի դիվանատանը:

Ինչ վերաբերում է Կարինի Արծնյան վարժարանի ձեռագրերի հավաքածուին, պետք է նշել, որ մինչև 1912 թվականը այնտեղ պահված 62 ձեռագրերի ճակատագրի մասին դժբախտաբար մենք ոչ մի տեղեկություն հասկապես հարուստ է եղել երկաթագիր ավետարաններով: 2. Քոսյանի ցուցակում հիշվում են ԺԱ, ԺԲ, ԺԱ—ԺԲ դարերից 4 ավետարաններ: Կարևոր է նաև 1235 թվականին Ստեփան գրչի կողմից չհիմում ընդօրինակված ավետարանը: Հիշյալ ձեռագրերից և ոչ մեկը հիշատակված չէ Գարեգին Ա Կաթողիկոսի «Հիշատակարանը ձեռագրաց» գործի Ա հատորում, ուր ընդգրկված են Ե դարից մինչև 1250 թվականների ձեռագրերի հիշատակարանները: Նույնպես ԺԴ դարից հիշյալ ժողովածուում եղել են 4 ավետարաններ (1306, 1313, 1332, 1333 թթ.), որոնցից երեքը չկան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Լ. Ս. Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ին նվիրված հատորում և միայն մեկը (1333 թ.), հիշված է Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրղալեմյանի անտիպ հիշատակարանների միջնորդությամբ, որը վերջինս աբտագրել էր իր ժամանակին: Կարինի Ս. Աստվածածին եկեղեցում: Հիշյալ փաստերը ևս մի անգամ էլ ապացուցում են, որ Արծնյան վարժարանի ձեռագրերը մուտք

չեն գործել մատենադարան, քանի որ վերոնշյալ հիշատակարանների ժողովածուները առաջին հերթին կազմված են Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի հիման վրա, և եթե այդ ձեռագրերը լինեին մատենադարանում, անպայման պետք է ընդգրկվեին հիշյալ հիշատակարանների ժողովածուներում:

Արծնյան վարժարանի ձեռագրերում կային նաև 1294 թվականին Այրի ձորում գրված մի Ավետարան, Փավստոս Բուզանդի պատմությունը ընդօրինակված ԺԶ—ԺԷ դարերում¹⁵¹, Հովսեպոս Փլափիանոսի պատմությունը, Պորփյուրի աշխատությունը և այլն:

Կարինի գյուղերում պահպանված և 2. Քոսյանի կողմից նկարագրված 33 ձեռագրերից միայն մեկի մասին գիտենք, որ գտնվում է այժմ Մաշտոցի անվան մատենադարանում: Այդ Շղնոց կամ Շխնոց գյուղի Ս. Դավիթ եկեղեցուն երբեմն պահված և 1038 թվականին Եվագր գրչի կողմից ընդօրինակված մագաղաթյա երկաթագիր ավետարանն է, որն այժմ պահվում է մեր մատենադարանում: Մյուս ձեռագրերից 1314 թվականին գրված և Դվնիկ գյուղում մինչև եղեռնը սահված մի ավետարանի հիշատակարանը ևս չգտանք հիշյալ ԺԴ դարի ձեռագիր հիշատակարանների ժողովածուում: Այսպիսով Կարնո գյուղերից 2. 2. Քոսյանի կողմից նկարագրված 33 ձեռագրերից միայն մեկն է հասել մեզ, իսկ մնացածների ճակատագիրը հայտնի չէ:

Կարինում և իր շրջանակներում թուրքական կառավարող շրջանների տիրապետությանը զոհ դարձան բավական կարևոր թիվ կազմող և արժեքավոր գրչագրեր ու հազվագյուտ տպագիր գրքեր, որոնց ոչ ցուցակը ունենք և ոչ էլ նրանց արժեքի մասին որևիցե գաղափար: 2. 2. Քոսյանը դիտել է տալիս, որ Օսմանյան կառավարության կողմից ցտուծներ կխուզարկվեին գիրք և թուղթ գրտնեղու. քանինքն թոնիրներում մեջ աթարին հետ այրած են քովերին ունեցած ճնալանդ ձեռագիրները (ընդգծումը մերն է—Ս. Ք.), քանինքն հողին տակ թաղած են հին թղթեր և հետո մոռցած են հանել, և եթե կային կարենցի հայ գրողներու հիշատակարաններ, այ-

¹⁵⁰ Թեոդիկ «Ամենուն տարեցոյց», 1916—1920, էջ 167:

¹⁵¹ Հիշյալ ձեռագրից 1910—1911 թվականին Կարնոյում կատարված 2. Ք. Հովնանյանի մի ընդօրինակությունը այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի 762 համարի տակ (2. 2. Ոսկյան, «Ցուցակ...», էջ 306): Նա որոշ տարբերություններ ունի տպագրից:

րած իսպառ մոռացության կարգն անցած են իրենց անունն ու հիշատակը»¹⁵²։

Դարձյալ ինչպես երևում է ականատեսի մի վկայությունից, Կարինում ևս այնքան անխնա կերպով են ոչնչացվել մեր ձեռագրերը, որ այստեղ էլ նրանցից կարևոր մի մասը ընկել է հանվել իբրև փաթաթելու թուղթ շուկայում օգտագործելու համար։ Հայերեն ձեռագրերի անխոնջ խուզարկումներից մեկը՝ Արտավազգ արքեպիսկոպոս Սյուրմեյանը 1921 թվականին Կարինում իր տարագրության շրջանից նկարագրում է հետևյալ զգայացունց իրականությունը. «Կարնո տարագրության սկզբի օրերուն ուղեցի տակավ ընտելանալ քաղաքի աղքատ շուկային, իմ առօրյա կենսական սպեքերուն համար։ Ներս մտա նպարատուն մը և ուղեցի ձիթապտուղի քանի մը հատիկ գնելու Հուլիումս դիս պիտի

խեղդեր այդ պահուն, երբ տեսա, որ թշվառ խանութպանը, մատներուն մեջ ուորած մագաղաթյա նուրբ և երկաթագիր թերթի մը մեջ ծրարեց ուղածս հատիկները։ Ես հետզհետե վարժվեցա սակայն, երբ ամեն օր քաղաքի փողոցներուն մեջ ծախվիլը կտեսնեի Հայ Եկեղեցվո հատուկ գեղեցիկ ու արժեքավոր անոթներու և զգեստ ու զարդերու»¹⁵³։

Չդիտենք ոչինչ այդ փաթաթված մագաղաթյա թերթերի մասին. արդյո՞ք Արծնյան վարժարանի կորած երկաթագիր ավետարաններից էին, թե՞ մեզ անծանոթ մի վանքից գտնված մի այլ երկաթագիր ձեռագրի բեկորը։ Համենայն դեպս, Կարինում ևս դժբախտաբար բավականին գրչագրեր են ոչնչացել մեր պապերի երկնած մագաղաթներից։

¹⁵³ Արտավազգ արքեպիսկոպոս Սյուրմեյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Հայեպի Ս. Քառասուն Մանկունք Էկեղեցվո և մասնավորաց, Երուսաղեմ, 1935, էջ 2։

¹⁵² Հ. Հակոբ ծ. վ. Փոսյան. «Բարձր Հայք», Ա, էջ 248։

(Շարունակելի)